

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 196

Յաջորդ տրամաբանական հարցումն որը ծագում է նրանց համար որոնք արդարացել են ու սրբում են այն է թէ արդեօ՞ք նրանք կ'շարունակեն այս վիճակում որպէս Քրիստոնէաներ մինչեւ վերջը՝ աճելով իրենց հաւատքում մինչեւ մահ, կամ թէ կայ հաւանականութիւնը որ նրանք Քրիստոսից հեռանան ու կորցնեն իրենց փրկութիւնը:

Եկեղեցու պատմութեան ընթացքում այս հարցը պատասխանել է տարբեր կերպերով տարբեր աստուածաբանական ասանդոքներով: Հռովմէական Կաթոլիկ եւ Արեւելեան Օրթոտոքս Եկեղեցիները ուսուցանում են որ մի հաւատացեալ կարող է ընկնել շնորհքի վիճակից եւ վերջապէս կրել յախտենական կորուստ: Արմէնական աստուածաբանութիւնը (ներառեալ Ուէպլեան, Մեթոդական, եւ Աւետարանական եկեղեցիների մեծամասնութիւնը) նաեւ հաստատում է որ մի հաւատացեալ կարող է կորցնել իր փրկութիւնը, եւ թէ հաւատացեալների յարատեւութիւնը կախեալ է նրանց շարունակական Քրիստոսի հաւատքից, հնազանդութեան եւ բարի գործերից: Լութերական աստուածաբանութիւնն նաեւ սովորեցնում է թէ հնարաւոր է որ մի հաւատացեալ ընկնել փրկութիւնից:

Սրբերի յարատեւութիւն – Միայն Վերակազմ աստուածաբանութիւնն է որը հաստատում է առանց որեւէ տարակուսանքի որ մի ճշմարիտ հաւատացեալ երբեք չի կարող կորցնել իր փրկութիւնը: Վերակազմ աստուածաբանութեան մէջ այս վարդապետութիւնը ճանաչւած է որպէս «սրբերի յարատեւութիւնը», նշանակւած «P» տառով «TULIP» կրճատման կամ Կալվինականութեան հինգ կետերի մէջ: Ուէստմինստըր Հաւատոյ Հանգանակը հռչակում է թէ՛ «Նրանք, որոնց Աստուած ընդունել է Իր Սիրելիում, ազդեցիկօրէն կանչել, եւ Իր Հոգով սրբել, չեն կարող ոչ լիովին եւ ոչ էլ թէ վերջնականապէս շնորհքի վիճակիցը ընկնել, այլ անշուշտ կ'յարատենն այնտեղ մինչեւ վերջ, եւ կ'փրկեն յաւերժաբար» (Գլուխ 17, Բաժին 1):

Աստուծաշնչից փաստ – Կան Աստուծաշնչում հսկայական թուով համարներ՝ Հին եւ Նոր Կտակարաններում, որն յստակօրէն կամ անուղղակիօրէն հաստատում են սրբերի յարատեւութեան վարդապետութիւնը: Հաւատացեալներ Հին Կտակարանում գիտէին որ Աստուծը որն փրկել էր նրանց նաեւ կ'պահպանէ նրանց ընդմիշտ (Մաղմոս 37:28, 94:14, 97:10, 145:20, Եսայիա 45:17): Հին Կտակարանում Աստուծոյ Իր ժողովրդի պահպանման վերաբերեալ ամենամեծագոյն հաստատումներից մէկը Մաղմոս 121ն է՝ ապահովման մի փառաւոր օրհներգ, նկարագրելով Աստուծուն որպէս իր ժողովրդի յախտենական օգնականը, հսկողը, պաշտպանն, ու պահպանողը:

Կան նաեւ Նոր Կտակարանում բազմաթիւ հաստատումներ որը ուսուցանում են այս նոյն սկզբունքը: Յովհաննէս 6:39-40ում Յիսուսը ասում է որ Նա եկել է անելու Իր Հօր կամքը՝ որն է պահելու եւ յարուցանելու բոլոր նրանց որոնց Հայրը տւել է Նրան՝ այսինքն հաւատացեալներին, առանցի կորցնելու նրանցից որեւէ մէկին (Յովհաննէս 6:54): Այս Քրիստոսի խոստումն է Իր Հօրին: Յովհաննէս 10:27-29ում Յիսուսը ասում է որ Նա տալիս է իր ժողովուրդին յախտենական կեանք, նրանք երբեք (յախտեան) չեն կորչիլ, եւ թէ ոչ ոք կարող է Իր ձեռքից յափշտակել Իր ժողովրդից որեւէ մէկին: Այս Քրիստոսի խոստումն է Իր ժողովրդին:

Քրիստոնէաների մեծամասնութիւնը առարկում են ասելով թէ՛ «Այո, ոչ ոք կարող է խլել մէկին Աստուծոյ ձեռքիցը դուրս, բայց անձը ինքն կարող է կամովին թողնել կամ մերժել Քրիստոսին»: Այսպէս մի խօսք անհիմաստ է, քանի որ «ոչ ով» նշանակում է «ոչ ով»: Չկան որեւէ բացառութիւններ: Նրանք որոնք հաստատում են որ մի հաւատացեալ կարող է կորցնել իր փրկութիւնը իրականում ասում են որ Հօր յախտենական, գերիշխան, եւ հրովարտակային կամքը կարող է արգելի կամ պարտի. եւ թէ Քրիստոսը, որն եկաւ կատարելու Իր Հօր կամքը, անկարող է պահել Իր խոստումը Իր Հօրին ու Իր ժողովրդին, եւ ուստի կարող է կորցնել նրանց որոնք Հօրիցն տրւել են Նրան: Այսպէս մի տեսանկիւն ոչ միայն ծիծաղելի ու անտրամաբանական է այլ նաեւ Աստուծաշնչի ուսուցումների հետ բացարձակ հակասութեան մէջ է (Յոր 42:2, Մաղմոս 33:11, Եսայիա 14:24, 46:9-11):

Վերակազմ աստուածաբանութիւնը ուսուցանում է որ ամեն ինչ որ Աստուած հրովարտակել է՝ ներառեալ Իր ժողովրդի փրկութիւնն ու յարատեւութիւնը, Նա եղելութեան է բերում առանց որեւէ անորոշութեան, քանի որ Աստուծոյ ծրագրի իրագործումը չի մնում պայմանաւորուած մարդուց, հրեշտակներից, դէւերից, Սատանայից, պարագաներից, կամ որեւէ մի բանից Նրանից դուրս:

Առաքեալները ունէին անասան վստահութիւն որ ամենակարող Աստուծը կ'կրէր ու կ'պահպանէր Իր ժողովրդին, ի վերջոյ ներկայացնելով նրանց անարատ, երբ Նրա փառքը պիտի յայտնուի (Եփեսացի 5:27, Կողոսացի 1:22, Ա. Թեսաղոնիկեցի 5:23, Բ. Թեսաղոնիկեցի 3:3, Բ. Տիմոթէոս 1:12, 4:18, Յուդա 24-25): Այսպէս հաստատում մեզի հաւատացեալների համար հսկայական ապահովման, վստահութեան, ու ցնծութեան աղբիւր են՝ գիտակցելով թէ մեր Տէրը որը փրկել է մեզ նաեւ խոստացել է, կամենում է, եւ կարող է պահել մեզ մինչեւ վերջն ու ընդմիշտ: